ՀՐԱՄԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ք. Երևան

N 1946 - Ա « 13 » օգոստոս 2014թ.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ՇՏԱՊ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի N 189-Ա ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N318-Ն որոշման N 2 հավելվածի 7-րդ կետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը, պետության կողմից երաշխավորված անվճար շտապ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների աշխատողների աշխատանքի վարձատրությունը կանոնակարգելու նպատակով,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Պետության կողմից երաշխավորված անվճար շտապ բժշկական օգնության ծառայություններ իրականացնող կազմակերպությունների ֆինանսավորման և աշխատողների վարձատրման չափորոշիչը»-ը՝ համաձայն հավելվածի:

2. Պետության կողմից երաշխավորված անվճար շտապ բժշկական օգնություն իրականացնող կազմակերպությունների ղեկավարներին՝

1) այսուհետ ղեկավարվել սույն հրամանի 1-ին կետով հաստատված չափորոշիչի պահանջներով,

2) ապահովել «Նվազագույն աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի փետրվարի 1-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար շտապ բժշկական օգնության ծառայություններ իրականացնող

կազմակերպությունների ֆինանսավորման և աշխատողների վարձատրման չափորոշիչը հաստատելու մասին» N 189-Ա հրամանը:

4. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝

1) ապահովել սույն հրամանի տրամադրումը Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին, Երևանի քաղաքապետարանին և Երևան քաղաքի «Շտապօգնություն» փակ բաժնետիրական ընկերությանը:

2) ապահովել սույն հրամանի տեղադրումը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Սույն հրամանը տարածվում է 2014 թվականի հուլիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Արմեն Կարապետյանին:

ՆԱԽԱՐԱՐ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի
13. օգոստոս 2014թ. N 1946 - Ա հրամանի

ՉԱՓՈՐՈՇԻՉ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ՇՏԱՊ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ

1. Սույն չափորոշիչը կարգավորում է պետության կողմից երաշխավորված անվճար շտապ բժշկական օգնություն իրականացնող կազմակերպությունների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Շտապ բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում տարեկան պայմանագրային գումարների հաշվարկման, ֆինանսավորման հետ կապված հարաբերությունները, վարձատրման նվազագույն դրույքաչափերը և վարձատրման առանձնահատկությունները:

2. Պետության կողմից երաշխավորված անվճար շտապ բժշկական օգնության ծառայությունների վերաբերյալ պայմանագրեր կնքվում են համապատասխան լիցենզիա և պետական պատվերի վերաբերյալ թույլտվություններ ունեցող բժշկական կազմակերպությունների հետ:

3. Պայմագրային գումարները հաշվարկվում են սպասարկման տարածքում առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի մոտ պայմանագրային հիմունքներով գրանցված և տվյալների շտեմարանում առկա անձանց թվի (այսուհետ՝ գրանցված անձիք) համար, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի (այսուհետ՝ Նախարար) կողմից հաստատված՝ համաձայնեցված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հետ, մեկ բնակչի համար սպասարկման գումարային նորմատիվով:

4. Շտապ բժշկական օգնություն իրականացնող կազմակերպությունների (այսուհետ՝ Կազմակերպություն) սպասարկման տարածքները և գրանցված անձանց թիվը որոշվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N318-Ն որոշմամբ սահմանված կարգով:

5. Շտապ բժշկական օգնության ծառայությունների պայմանագրային գումարների հաշվարկումը, ֆինանսավորումը և վարձատրումն, ըստ իրականացնողների, դասակարգվում է հետևյալ կերպ.

1) ընտանեկան բժիշկների կողմից իրականացվող տնային կանչեր շտապ օգնության մեքենայով;

ա. պայմանագրերը կնքվում են գյուղական բժշկական ամբուլատորիաների, գյուղական առողջության կենտրոնների և գյուղական առողջության առաջնային պահպանման կենտրոնների հետ, պայմանագրային գումարները հաշվարկվում են Կազմակերպությունների սպասարկման տարածքի գրանցված անձանց թվի համար՝ ընտանեկան բժշկի կողմից սպասարկվող մեկ բնակչի համար հաստատված միջինացված գումարի (նորմատիվ) արտադրյալով.

բ. ֆինանսավորումն իրականացվում է՝ ընտանեկան բժիշկների կողմից փաստացի կատարված կանչերի դիմաց, ընտանեկան բժիշկների համար Նախարարի կողմից հաստատված (համաձայնեցված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հետ) մեկ կանչի գնով, սակայն ոչ ավել, քան տարեկան պայմանագրային գումարը: Ամսական ֆինանսավորումը Պատվիրատուի կողմից իրականացվում է եռամսյակային համամասնությունների շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N318-Ն որոշմամբ սահմանված կարգով.

գ. շտապ բժշկական օգնության կանչերը սպասարկող բժշկի, միջին բուժանձնակազմի և վարորդի վարձատրությունը կատարվում է փաստացի կանչերի դիմաց՝ մեկ կանչի համար հավելված 1-ով սահմանված վարձատրման նորմաներով: Պայմանագրային ծավալների գերազանցման դեպքում վարձատրությունը կատարվում է կազմակերպությունների ընդհանուր եկամուտների հաշվին՝ հավելված 1-ով սահմանված մեկ կանչի վարձատրման նորմատիվների 50%-ի չափով.

2) Հայաստանի Հանրապետության մարզային Կազմակերպությունների (միավորումներ) կազմում գործող շտապ օգնության բաժինների (ծառայություններ), Երևան և Գյումրի քաղաքների շտապ օգնության կայանների կողմից իրականացվող շտապ օգնության ծառայություններ.

ա. պայմանագրերը կնքվում են մարզային Կազմակերպությունների (միավորումների), Երևան և Գյումրի քաղաքների շտապ օգնության կայանների հետ: Պայմանագրային գումարները հաշվարկվում են Կազմակերպությունների սպասարկման տարածքի գրանցված անձանց թվի համար տվյալ Կազմակերպությունների համար հաստատված մեկ բնակչի սպասարկման միջինացված գումարի (նորմատիվ) արտադրյալով: Մարզային Կազմակերպություններում (բացառությամբ Գյումրի և Վանաձոր քաղաքները սպասարկող շտապ օգնության ծառայությունները) նորմատիվները հաստատվում են դիֆերենցված՝ ըստ հետևյալ երեք մակարդակների.

- մինչև 20.000 բնակիչ սպասարկող.

- 20.000-30.000 բնակիչ սպասարկող.

- 30.000-ից ավելի բնակիչ սպասարկող շտապ օգնության ծառայություններ.

բ. ֆինանսավորումն իրականացվում է փաստացի կատարված կանչերի դիմաց, տվյալ Կազմակերպության համար Նախարարի կողմից (համաձանեցված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հետ) մեկ կանչի սպասարկման համար հաստատված գներով, սակայն ոչ ավելին, քան տվյալ Կազմակերպության համար «Շտապ բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում հաստատված պայմանագրային գումարները:

գ. Մարզային Կազմակերպությունների (միավորում) կազմում գործող շտապ օգնության բաժինների (ծառայությունների) կանչերը սպասարկող բժիշկների, միջին բուժանձնակազմի և վարորդների վարձատրությունը կատարվում է ժամավճարային եղանակով՝ հավելված 1-ով սահմանված դրույքաչափերից ելնելով: Բժշկական կենտրոնների, բուժմիավորումների կազմում գործող շտապ օգնության ծառայության կանչերը Կազմակերպության այլ ծառայությունների բուժանձնակազմի կողմից իրենց հիմնական աշխատաժամանակի ընթացքում սպասարկման դեպքում վարձատրությունը կատարվում է փաստացի կանչերի դիմաց հավելված 1-ով մեկ կանչի համար սահմանված վարձատրման գումարների 70%-ի չափով,

դ. Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների շտապ բժշկական օգնության կայաններում կանչերը սպասարկող բժշկի, միջին բուժանձնակազմի և վարորդների վարձատրությունը կատարվում է՝

- ժամավճարային եղանակով հավելված 1-ով սահմանված դրույքաչափերից ելնելով.

- ժամավճարային և որպես հավելում՝ բոնուսային վարձատրություն (այսուհետ՝ բոնուսային վարձատրություն):

6. Երևան և Գյումրի քաղաքների շտապ օգնության կայանների կողմից վարձատրությունը կատարվում է սույն կարգի 5-րդ կետի 2)-րդ ենթակետի դ. պարբերությամբ սահմանված երկու տարբերակներից որևէ մեկով: Տարբերակի ընտրությունը կատարում է կազմակերպությունը՝ համաձայնեցնելով հիմնադրի հետ:

7. Բոնուսային վարձատրություն դեպքում ժամավճարային վարձատրությունը կատարվում է հավելված 1-ով հաստատված դրույքաչափի 90% գումարի հաշվարկից ելնելով: Բոնուսային վարձատրմանն ուղղվում է բժիշկների, միջին բուժանձնակազմի և

վարորդների համար հավելված 1-ով սահմանված դրույքաչափերի 10%-ից ոչ պակաս գումար: Բոնուսային վարձատրությունը կատարվում է բրիգադների կողմից կանչերի օպտիմալ թվաքանակի կատարման և գերակատարման համար՝ հաշվի առնելով կանչերի քանակը և սպասարկման որակական առանձին ցուցանիշներ: Բոնուսային վարձատրությունը կարող է կատարվել ամսական, եռամսյակային և տարեկան արդյունքների դիմաց՝ տնօրենների կողմից սահմանված բոնուսային վարձատրման կարգի, պայմանների և ցուցանիշների համաձայն: Բոնուսային վարձատրմանը կարող են ուղղվել նաև Կազմակերպության ընդհանուր ծախսերի տնտեսումները:

8. Ֆինանսավորման ընդհանուր դրույթներն են.

1) «Կեղծ» (կանչի մեկնած, սակայն շտապ բժշկական օգնության ծառայության բրիգադից անկախ պատճառներով չսպասարկած) կանչերի փոխհատուցումը կատարվում է համապատասխան կանչի համար նախատեսված գնի 60 տոկոսի չափով, սակայն ոչ ավելի, քան տարվա ընթացքում գրանցված կանչերի ընդհանուր թվի 2 տոկոսը.

2) տարածքը սպասարկող շտապ բժշկական օգնության ծառայության բրիգադի միջոցով Հայաստանի Հանրապետության մարզերից պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բուժվող ծանր հիվանդներին Երևանի բժշկական կազմակերպություններ տեղափոխումները 30կմ շառավիղը գերազանցելու դեպքում փոխհատուցվում են «սանիտարական ավիացիայի» համար Նախարարի կողմից հաստատված գների 60 տոկոսի չափով:

9. Վարձատրման ընդհանուր դրույթներ են.

1) շտապ օգնության կայանների և բաժանմունքների աշխատավարձի ֆոնդը ձևավորվում է հետևյալ միջոցների հաշվին.

ա. պետական պատվերից ստացված եկամուտներից.

բ. վճարովի ծառայություններից ստացված եկամուտներից.

գ. այլ եկամուտներից.

2) աշխատողների աշխատավարձը բաղկացած է՝

ա. ժամավճարային և/կամ ամսեկան երաշխավորված աշխատավարձի դրույքաչափից.

բ. կատարված աշխատանքի դիմաց գործավարձային վարձատրությունից (բոնուսային վարձատրություն սույն կարգում նախատեսված դեպքերում).

գ. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված հավելումներից, հավելավճարներից, պարգևատրումներից և խրախուսական այլ վճարումներից.

3) բրիգադների բժիշկների, միջին բուժանձնակազմի և վարորդների երաշխավորված աշխատավարձերի նվազագույն դրույքաչափերը և վարձատրման հիմնական սկզբունքները սահմանվում է սույն չափորոշչով: Բրիգադների բժիշկների, միջին բուժանձնակազմի և վարորդների աշխատավարձի առավելագույն գումարը սահմանում է Կազմակերպությունը, ելնելով ֆինանսական հնարավորություններից՝ Կազմակերպության հիմնադրի համաձայնությամբ.

4) ելնելով Կազմակերպության ֆինանսական վիճակից՝ հավելված 1-ով սահմանված ամսեկան դրույքաչափերը և մեկ կանչի վարձատրման վարձաչափերը Կազմակերպության կողմից կարող են պակասեցվել մինչև 10% -ի չափով.

5) շտապ բժշկական օգնության գլխավոր բուժքրոջ աշխատավարձի նվազագույն երաշխավորված դրույքաչափը սահմանվում է միջին բուժանձնակազմի կատեգորիայի աշխատողների նվազագույն երաշխավորված աշխատավարձի 1.3 դրույքի չափով.

6) օրացուցային տարվա ընթացքում, հաշվի առնելով Կազմակերպության ֆինանսական միջոցներով ապահովվածության վիճակը, աշխատողների երաշխավորված աշխատավարձերի դրույքաչափերի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ բարձրացնող գործակիցները.

ա. գիտությունների դոկտորի գիտական աստիճանի համար- 1.2

բ. գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար- 1.1

գ. պատվավոր կոչման համար – 1.1

դ. շտապ օգնությունում առաջին երեք տարիների չընդհատվող աշխատանքային ստաժի համար 1.1 գործակից, և ամեն հաջորդող երկու աշխատանքային տարիների համար 1.1 գործակից, բայց ոչ ավելի քան դրույքի 1.5 գործակիցը.

7) Երևան և Գյումրի քաղաքների շտապ օգնության կայանների ղեկավարների աշխատավարձի պաշտոնական դրույքաչափը սահմանվում է հիմնադրի կողմից: Կազմակերպության տեղակալների և գլխավոր հաշվապահի աշխատավարձերի պաշտոնական դրույքաչափերը սահմանվում են Կազմակերպության ղեկավարի աշխատավարձից 10-30% -ով պակաս.

8) աշխատանքային նորմալ պայմաններից շեղումներ ունեցող տեղանքում տեղանքում աշխատանքի համար կարող են վճարվել Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված բարձր լեռնային և լեռնային վճարներ, ելնելով Կազմակերպության ֆինանսական հնարավորություններից.

9) աշխատողների պարգևատրության կարգը սահմանում է Կազմակերպությունը: Աշխատողների պարգևատրությունը կարող է կատարվել՝

ա. օրինակելի և բարեխիղճ աշխատանքի համար.

բ. արտակարգ իրավիճակների և մասսայական հանդիսությունների /իրադարձությունների/ ժամանակ ցուցաբերած օպերատիվ բժշկական օգնության համար.

գ. բնակչության հետ աշխատանքում ցուցաբերած սիրալիր վերաբերմունքի և պրոֆեսիոնալիզմի համար.

դ. կատարված աշխատանքների ինտենսիվության, այդ թվում մեծաթիվ կանչերի օպերատիվ սպասարկման համար և այլն.

10) շտապ բժշկական օգնության ծառայությամբ զբաղվող այլ աշխատողների (որոնց նվազագույն աշխատավարձը նախատեսված չէ սույն չափորոշիչով) վարձատրման չափը և պայմանները սահմանում է Կազմակերպությունը հիմնադրի կողմից հաստատված ընդհանուր աշխատավարձի ֆոնդի շրջանակներում:

10. Ծառայության գների բարձրացման և բժշկական օգնության ծավալի ավելացման հաշվին եկամուտների աճի դեպքում, Կազմակերպությունում կատարվում է սույն կարգի 9-րդ կետի 10-րդ ենթակետում նշված ծառայության աշխատողների աշխատավարձի բարձրացում, իսկ հրամանին հաջորդող տարիներում բարձրացվում են նաև նվազագույն դրույքաչափերը և վարձատրման գումարները՝ տնօրենի կողմից սահմանված չափով:

11. Աշխատողների արձակուրդային գումարների վճարման համար անհրաժեշտ միջոցների պահուստավորումը և հետագա վճարումները կատարվում են Կազմակերպության ընդհանուր աշխատավարձի ֆոնդի շրջանակներում: Այն դեպքում, երբ սույն չափորոշիչով սահմանված աշխատավարձի չափերը հնարավորություն չեն տալիս ընդհանուր եկամուտների շրջանակներում կատարել նաև արձակուրդային վճարումները, ապա Կազմակերպությունը փաստացի աշխատավարձի չափը սահմանելիս հաշվի է առնում արձակուրդային վճարումների տարեկան գումարը և հավելված 1-ում նշված չափերում կատարում է համապատասխան փոփոխություն համաձայն սույն կարգի 9-րդ կետի 4)-րդ ենթակետի:

12. Այն դեպում, երբ Կազմակերպության ընդհանուր եկամուտները չեն բավարարում սույն չափորոշչով սահմանված վարձատրություն իրականացնելու

համար, Կազմակերպությունը սույն կարգի սկզբունքների հիման վրա հաշվարկում է վարձատրման նվազագույն դրույքաչափեր, տոկոսաչափեր և ներկայացնում է Նախարարի համաձայնեցմանը: